ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի N 604-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՊՈԱԿ-ը ստեղծվել է ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 2142-Ն որոշմամբ, որով կազմակերպության կառավարման լիազորությունները վերապահվել են Երևանի քաղաքապետին:

«Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՊՈԱԿ-ն ունի 13 մասնաճյուղ (այսուհետ՝ գրադարան):

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան ՀՀ կառավարության 29.05.2009թ. N 604-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանվել է հետևյալը.

«Երևանի ավագանու առաջին ընտրությունից հետո սեփականության իրավունքով անհատույց Երևան քաղաքին համարել փոխանցված (հանձնված)՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրի լիազորությունները և դրանց ամրացված գույքը, այդ թվում՝ անշարժ գույքի համար առանձնացված հողամասերը՝ համաձայն N 1 հավելվածի»:

ՀՀ կառավարության 29.05.2009թ. N 604-Ն որոշման N 1 հավելվածի 27-րդ կետի համաձայն՝ գրադարանի հիմնադրի լիազորությունները և դրան ամրացված Երևանի տարբեր հատվածներում գտնվող ընդհանուրը 3408.2 քմ շենքեր-շինությունները (Ամիրյան 2 հասցեում գտնվող կենտրոնական գրադարանի և 13 մասնաճյուղերի տարածքները) և գրադարանի (Ամիրյան 2 հասցեում գտնվող կենտրոնական գրադարանի և 13 մասնաճյուղերի տարածքների) համար առանձնացված 0.13473 քմ հողամասերը սեփականության իրավունքով հանձնվել են Երևանի քաղաքային համայնքին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.05.2009թ. N 604-Ն որոշման N 1 հավելվածի 27-րդ կետի դրույթները՝ Երևանի քաղաքային համայնքը ձեռնամուխ է եղել իրեն անհատույց սեփականության իրավունքով փոխանցված (հանձնված) գրադարանի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների իրականացմանը: Գրադարանի թվով 3 մասնաճյուղերի՝ Սայաթ-Նովա 37 հասցեում գտնվող 236,2 քմ, Տ. Մեծի 30 հասցեում գտնվող 148,8 քմ և Աթոյան անցուղի 9 հասցեում գտնվող 387,15 քմ տարածքների նկատմամբ գրանցվել են Երևանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը, իսկ Բաղրամյան 20 հասցեում գտնվող գրադարանի մեկ այլ մասնաճյուղի զբաղեցրած 140,2 քմ մակերեսով տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման աշխատանքներն ավարտման փուլում են:

Մինչ այդ, ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 734-Ն որոշման 4.2. կետի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման

վարչությանը թույլատրվել է իր տնօրինության՝ Երևանի Ամիրյան 2 հասցեում գտնվող շենքի 1347.3 քառ. մետր տարածքն ուղղակի վաճառքի ձևով օտարել նախօրոք հայտնի գնորդ «Յունիինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 734-Ն որոշման սկզբնական տարբերակի 4.5. կետի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին հանձնարարվել է՝

«ա) սահմանված գումարի վճարումից հետո մեկամսյա ժամկետում գնորդի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր.

բ) առուվաճառքի պայմանագրում նշել, որ գնորդը պարտավոր է նույն հասցեում կառուցվող համալիրից Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, սեփականության իրավունքով, անհատույց օտարել 800 քառ. մետր տարածք՝ «Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացնելու նպատակով:»:

ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N 1376-Ն որոշման 1-ին կետով փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 734-Ն որոշման 4.5-րդ կետի «բ» ենթակետում, որի համաձայն նշված 4.5-րդ կետի «բ» ենթակետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«բ) առուվաճառքի պայմանագրում նշել, որ գնորդը պարտավոր է Կառավարական տուն 3 հասցեում գտնվող շենքի 1463,3 քառ. մետր մակերեսով կցակառույցից (Նալբանդյան 4/1) առանձնացնել «Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից զբաղեցված 1350 քառ. մետր մակերեսով տարածքը՝ դրա սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ հողատարածքով, և սեփականության իրավունքով անհատույց օտարել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության՝ «Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու նպատակով:»:

ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N 1376-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ փոփոխություն է կատարվել նաև ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը հաստատելու մասին» N 604-Ն որոշման N 1 հավելվածի 27-րդ տողում, որի 3, 4, 5, 6, 7 և 8-րդ սյունակներում նշված բառերը և թվերը հանվել են:

Հավանաբար, ՀՀ կառավարությունն իր 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N 1376-Ն որոշման 2-րդ կետի ընդունման համար հիմք է ընդունել նույն որոշման 1-ին կետի դրույթները, համարելով, որ ՀՀ կառավարության 29.05.2009թ. N 604-Ն որոշման հավելվածի 27-րդ կետում նշված գրադարանին ամրացված ամբողջ անշարժ գույքը բաղկացած է եղել միայն իր նախկին գտնվելու վայրի՝ Ամիրյան 2 հասցեի տարածքից:

Սակայն, ինչպես նշվել է, գրադարանը, բացի կենտրոնական մարմնի գտնվելու վայրից /ներկայումս՝ Նալբանդյան 4/1/, ունի նաև 13 մասնաճյուղ, որոնցից 3-ի զբաղեցրած տարածքների նկատմամբ արդեն իսկ գրանցված է Երևանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը, իսկ մեկ այլ մասնաճյուղի գտնվելու վայրի

տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքներն ավարտման փուլում են:

Բացահայտված վերոհիշյալ խնդրի լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի N 604-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

## 2. Առաջարկվող կարգավորման բնույթը

ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի N 604-Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությամբ կլուծվեն Երևանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով փոխանցման ենթակա գրադարանի և դրա բոլոր մասնաճյուղերի զբաղեցրած տարածքների հետ կապված խնդիրները:

## 3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և դրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից:

## 4. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում կկարգավորվեն և կհստակեցվեն Երևանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով փոխանցման ենթակա գրադարանի և դրա բոլոր մասնաճյուղերի զբաղեցրած տարածքների գտնվելու վայրերի և դրանց մակերեսների հետ կապված հարցերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ